ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 09 » օգոստոս 2024թ. No 4342 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 02-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N 429-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N 3889-Ա ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ» N 3890-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N EL/01/1408-24 առ 08.08.2024թ գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.2022 թվականի փետրվարի 02-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N 429-Ա հրամանի հավելվածի *Նոոֆեն 100մգ; (15) փաթեթիկներ 1գ* դեղի N 20426 գրանցման հավաստագրի *“Առևտրային անվանումը”* կետի *Նոոֆեն”* բառը փոխարինել *“Նոոֆեն 100”* բառերով,

2.2024 թվականի հուլիսի 16-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N 3889-Ա հրամանի հավելվածի *Կեպոտիֆեն դեղահատեր 1մգ* դեղի N 22171 գրանցման հավաստագրի “Արտադրողը” կետի *“Ֆաբրիտսիուս փ., 3,”* բառերը փոխարինել *“Ֆաբրիտսիուս նրբանցք, 3,”* բառերով,

3.2024 թվականի հուլիսի 16-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ» N 3890-Ա հրամանի հավելվածի *Մեթոտրեքսատ* դեղի N 19302/1/1 և N 19303/1/1

գրանցման հավաստագրերի “Արտադրողը” կետի *“Ֆաբրիկսիուս փ., 3,”* բառերը փոխարինել *“Ֆաբրիկսիուս նրբանցք, 3,”* բառերով:

Ընդունել թվով 3 հրամաններում փոփոխությունները:

4.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության:

5.«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Բաղրյանին

1) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, լիազոր մարմնի հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

6.Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել նշված դեղերի վերաձևակերպված հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ